«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

«Դասի պլանավորում: Ուղիղ հրահանգումով դասավանդման արդյունավետությունը աշխարհագրության դասաժամերին»

Առարկան՝

Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝

Անդրեասյան Աննա

Ուսումնական հաստատություն՝

Արևածագի Կ. Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ՈՒՀԴ կառուցվածքը 4

1. *Դասի սկիզբ* 5
2. *Նոր նյութի ներկայացում* 8
3. *Գործնական աշխատանք* 9
4. *Ինքնուրույն աշխատանք* 11
5. *Դասի ավարտ* 12

Եզրակացություն 13

ՈՒՀԴ դասապլանի ձևանմուշ 14

Օգտագործված գրականություն 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում կան դասապլանների կազմության տարբեր մեթոդներ։ Բազմաթիվ ուսումնասիրություններ տարբեր միջավայրերում ցույց են տալիս, որ այն աշակերտները, ովքեր ուղիղ հրահանգումով կրթություն են ստանում, զգալիորեն ավելի մեծ ձեռքբերումներ ունեն, ավելի լավ են հանդես գալիս դպրոցում և ունեն ավելի բարձր ինքնագնահատական, քան այլ մեթոդներով ուսումնառություն ստացող աշակերտները։ Ուղիղ հրահանգումով դասավանդումը /այսուհետ՝ ՈՒՀԴ/ ուսուցման մոդել է, որտեղ գիտելիքի ու հմտության փոխանցումը բաժանված է նախապես մանրամասն մշակված, փոքր, կազմակերպված հերթականությամբ քայլերի, ուսուցիչը ներկայացնում է կոնկրետ քանակի տեղեկատվություն կոնկրետ ժամանակի համար, նախապես հստակ սահմանված են ուսումնական վերջնարդյունքները։ *(Hattie, 2009)*

Ուղիղ հրահանգումով դասավանդման մոդելն արդիական մեթոդ է իրենից ներկայացնում եւ նախատեսում է ձեւավորել ինքնուրույն սովորող, նախաձեռնող եւ վերլուծող աշակերտ։ Սրանով է պայմանավորված նրա ուսումնասիրման կարեւորությունն ու կիրառումը։ Այն զարգացնում է մի շարք առանցքային կոմպետենցիաներ, այդ թվում՝ սովորել սովորելու, ինքնաճանաչողություն եւ սոցիալական, թվային եւ մեդիա կարողությունները և այլն։

Հետազոտական աշխատանքը պատրաստելիս մեծապես օգտվել եմ Դասավանդի՛ր, Հայաստան կրթական հիմնադրամի նյութերից։ Իմ կազմած ՈՒՀԴ մոդելով դասապլանը ևս կազմվել է ԴՀ-ի հետ աշխատանքի ընթացքում։

ՈՒՀԴ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՈՒՀԴ մոդելը այս բոլոր մոդելների ամբողջությունն է, որն իր մեջ ներառում է դասի կազմակերպման 5 քայլ՝

1. Դասի սկիզբ/խայծ
2. Նոր նյութի հաղորդում
3. Գործնական աշխատանք
4. Ինքնուրույն աշխատանք
5. Դասի փակում/ավարտ

Այս հինգ փուլերը հերթագայում են մեկը մյուսին և ապահովում դասի շարունակական ընթացքը։

Կառուցվածք



Նոր նյութի ներկայացումից մինչև Ինքնուրույն աշխատանքի փուլը պատկերավոր կարելի է ներկայացնել երկու եռանկյունների միջոցով, որտեղ երևում է ամեն փուլում ուսուցչի և աշակերտի կատարած աշխատանքների համամասնությունը: Նոր նյութի բացատրության ժամանակ ուսուցչի մասնաբաժինն ամենամեծն է և փուլերին համընթաց փոքրանում է՝ տեղը զիջելով աշակերտի աշխատանքի մեծացմանը: Վերջինս իր առավելագույն ծավալին է հասնում Ինքնուրույն աշխատանքի կատարման ժամանակ:



Առանձին կետերով դիտարկենք դասի յուրաքանչյուր փուլը:

1. Դասի սկիզբ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարեւոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի եւ վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարեւոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: *Դասի սկզբին կիրառվող որոշ մեթոդներից են. Խորհրդավորությունը, զուշակությունը, զարմանքն ու անսպասելիությունը, մեջբերումները, ԳՈՒՄ-ը, մտագրոհը և այլն:*

Դասի հանդեպ հետաքրքրությունը՝ խայծն ապահովելուց հետո կարելի է ներկայացնել վերջնարդյունքները, որպեսզի աշակերտն իմանա, թե դասի ավարտին ինքն ի՞նչ արդյունքի է հասնելու։

Ուսումնառության վերջնարդյունքները սահմանվում են ուսուցչի կողմից, բայց արտացոլում են այն ուսումնական արդյունքները, որոնք սովորողներն են ունենալու։ Դրանք պետք է լինեն չափելի ու հստակ, որպեսզի հնարավոր լինի գնահատել։
Վերջնարդյունքներ ձեւակերպելն օգնում է ուսուցիչներին հստակեցնել, թե ինչ պետք է անեն աշակերտները ամբողջ դասի ընթացքում՝ սկզբից մինչև վերջ, եւ ինչ վերջնարդյունքի հասնեն։ (Zhou, 2017) Անհրաժեշտ է ներկայացնել, թե աշակերտները

- ինչ են սովորելու
- ինչու է դա կարևոր,
- ինչպես է դա կապված նախորդ դասի հետ՝ ակտիվորեն ներգրավելով աշակերտներին ու հետաքրքրելով։

Դասի վերջնարդյունքի հստակ սահմանումից է կախված, թե որ ուղղությամբ կշարժվեք և այդ ճանապարհին ինչ գործիքներ կամ մեթոդներ կընտրեք։ Դասի վերջնարդյունքները սահմանելիս պետք է առաջնորդվել հետևյալ չափանիշներով. հնարավորություն տալ աշակերտներին

- *ստանալ գիտելիք*
- *կիրառել ստացած գիտելիքը*
- *կատարել գիտելիքի վերլուծություն*

Վերջնարդյունքները սահմանելիս պետք է խուսափել այն բայերի կիրառությունից, որոնց արդյունքը չափելի կամ տեսանելի չէ։ Օրինակ՝ «Աշակերտները կսովորեն Իտալիայի տեղը» վերջնարդյունքը սխալ է ձևակերպված, փոխարենը ճիշտ կլինի ասել՝ «Աշակերտները քարտեզի վրա ցույց կտան Իտալիա



պետությունը»: Պետք է խուսափել «սովորել, իմանալ, հասկանալ» անորոշ բայերից:

Ճիշտ վերջնարդյունքներ կազմելու համար օգնության են հասնում Բլումի տաքսոնոմիայի բայերը: ՈՒՀԴ դասապլանն ինքնին Բլումի աստիճանակարգի իրագործումն է: Վերջնարդյունքներն անպայման պետք է լինեն չափելի, հստակ, հավակնոտ, իրատեսական և ժամանակային, այսինքն՝ SMART:



S- Specific (Հատուկ) — Ի՞նչ եք ցանկանում անել:

M- Measurable (Չափելի) — Ինչպե՞ս եք չափելու Ձեր արդյունավետությունը և իմանալու, թե ե՞րբ եք հասել Ձեր վերջնարդյունքին:

A- Attainable (Հասանելի) — Ունե՞ք արդյոք բոլոր այն հմտություններն ու աղբյուրները Ձեր վերջնարդյունքին հասնելու համար:

R- Relevant (Իրատեսական) — Արդյո՞ք Ձեր վերջնարդյունքը համապատասխանում է Ձեր տեսլականին:

T- Time-based (ժամանակավոր)- Ե՞րբ է վերջնաժամկետը և արդյո՞ք այն իրատեսական է:

2. Նոր նյութի ներկայացում

Նոր նյութի ներկայացմանը պատրաստվելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևալ երեք կետերին.

1. Բովանդակություն */ի՞նչ են սովորելու և ինչու՞ է կարևոր տվյալ նյութը/։*
2. Ձև */ինչպե՞ս են սովորելու նյութը. մեթոդների և գործիքների ընտրություն/։*
3. Ընկալման ստուգում */որքանո՞վ են սովորողներն ընկալել նոր նյութը/։*

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել։ Հետազոտությունները ցույց են տվել, որ երեխան մեկ դասի ընթացքում կարող է միջինում սովորել 4-7 նոր բան՝

- նոր բառեր
- նոր հասկացություններ
- նոր դրույթներ

(Խաչատրյան, 2020)

Նոր նյութի կարեւոր դրույթները պետք է բխեն դասի վերջնարդյունքներից։ Հետեւաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը։ Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը։ Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարեւոր է այն փոքր կտորներով բացատրելը։ 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը։ Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա։ Որոշ սովորողներ նյութն ավելի խորը եւ հեշտ են ըմբռնում տեսողական միջոցների կիրառության, մյուսները՝ լսողական ճանապարհով։ Չափահաս մարդու գիտելիքի 75%-ը ձեռք է բերվում տեսնելու միջոցով, 13%-ը՝ լսելու, իսկ 12%-ը՝ շոշափելու, հոտ քաշելու և համտեսելու միջոցով։ Հետևաբար Նոր նյութը ներկայացնելիս հնարավորության դեպքում ազդեք սովորողների հինգ զգայարանների վրա՝ նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել քարտեզներ, պաստառներ,

գծագրեր, նկարներ, շարժումներ։ Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են։ Նոր նյութի մատուցման փուլում շատ կարեւոր է նաեւ արդեն իմացածի հետ կապակցումը։ Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ։ Հետեւաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ։

Նոր նյութի մատուցման մեթոդներից են. Սատանայի հնար, Կենտրոններով աշխատանք, Վենի դիագրամ, T-ձև աղյուսակ, Դասի զեկուցող և այլ մեթոդները։

Նյութի բացատրությունից հետո, մինչև հաջորդ փուլին անցնելը, պետք է կատարել ընկալման ստուգում։ Ընկալման ստուգումներն օգնում են հասկանալ, թե

- որքանո՞վ են նոր նյութը հասկացել սովորողները
- ի՞նչն է, որ դեռևս կիսատ են ընկալել
- արդյո՞ք բոլորն են ընկալել նոր նյութը

Հարցադրումները պետք է կազմել նախապես՝ հետևելով նշված կետերին.

- Հարցը ներկայացնել ողջ դասարանին։
- Տրամադրել բավարար ժամանակ մտածելու համար։
- Հարցերի միջոցով ուշադրության կենտրոնում պահել թե՛ այն սովորողներին ովքեր պատասխանել են, թե՛ նրանց ովքեր չեն պատասխանել։
- Ստեղծել ապահով միջավայր, որտեղ յուրաքանչյուր աշակերտ իրեն գնահատված և լսելի է զգում ու չի վախենում սխալվելուց։

3. Գործնական աշխատանք

Գործնական աշխատանքի ժամանակ ուսուցիչը ուղղորդում է սովորողներին, որպեսզի գործնականորեն կիրառեն նոր ձեռք բերված գիտելիքն ու հմտությունը։ Այս աշխատանքի ընթացքում կարևոր է, որ ուսուցիչն օգնի երեխաներին օրինակներով և հստակեցնի անհասկանալի մասերը։ Անհրաժեշտ է, որ ուսուցիչը ուսումնառությունը կազմակերպի այնպիսի մեթոդներով, որոնց շնորհիվ աշակերտը դառնում է

դասապրոցեսի առաջնային մասնակից և նոր նյութը սովորում է ոչ ուսուցչի մատուցմամբ, այլ ուսուցչի ուղղորդմամբ:

Գործնական աշխատանքի իրականացումը երկու կողմից է մեծ ներազդեցություն ունենում ինքնառաջնորդվող և առաջնորդող անհատի ձևավորման հարցում:

Առաջինը՝ շարունակական կրթության, կրթության կիրառականության կարևորությունն է ընգծվում: Աշակերտը սովորում է և սովորածը կարողանում է կիրառել, ստեղծում է միջառարկայական և վերառարկայական կապեր: Նույն երևույթին նայում է տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրում է բոլոր կողմերից:

Երկրորդ մեծ ազդեցությունն այն է, որ այս ուսումնառության ընթացքում աշակերտը դառնում է հիմա և այստեղ սովորող, հիմա և այստեղ իր սովորած նյութի կարևորությունն ու կիրառականությունը ընկալող անհատ: Գիտելիքը նյութականանում է իր իսկ ստեղծածի շնորհիվ:

Գործնական աշխատանքը կարող է իրականացվել՝

- անհատական
- զույգերով
- խմբերով

Գործնական աշխատանքի հիմնական նպատակներն են.

- սոցիալական հմտությունների ձևավորում և զարգացում
- համագործակցային շփման խթանում, զարգացում
- տեսական նյութը գործնականում իրականացնելու հնարավորություն
- առաջնորդության զարգացում
- անհատի ինքնադրսևորման հնարավորություն
- ժամանակի կառավարում

Գործնական աշխատանքի իրականացման եղանակներ կարող են լինել 6 գլխարկի մեթոդը, PNI -Pozitive, Negative,Interesting, գծապատկերների կազմումը, T – ձև աղյուսակը, Վենի դիագրամը, խաչբառերը, քարտեզագրումը, բանավեճն ու դերախաղը, աշակերտների հետ տեսաձայնային նյութերի դիտումը և մեկնաբանումը:

Գործնական աշխատանքի հրահանգները տալուց հետո պարտադիր է տալ նախապես պատրաստված ստուգման հարցերը.

- Ի՞նչ ենք անում
- Ինչպե՞ս ենք անում
- Որքա՞ն ժամանակ ունենք։
- Ի՞նչ ենք անում ավարտից հետո։

4. Ինքնուրույն աշխատանք

Մարդը հիշում է՝

կարդացածի 10%

լսածի 20%

տեսածի 30%

տեսածի և լսածի 50%

ինքնուրույն կատարվածի 90%

Гребенюкова В. И., 2014, с. 75

Ինքնուրույն աշխատանքը նոր նյութի և գործնական աշխատանքի տրամաբանական շարունակությունն է։ Այս փուլում աշակերտներն առանց ուսուցչի միջամտության կիրառում են այդ դասին սովորածը։ Վերջինս օգնում է ուսուցչին հասկանալ, թե աշակերտներից ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ որքանով է ընկալել նոր նյութը։ Ինքնուրույն աշխատանքը պետք է ներառի բարդության տարբեր մակարդակներ՝ գիտելիք, կիրառություն, քննական մտածողություն։

Ինքնուրույն աշխատանքի հրահանգները պետք է լինեն հստակ ձևակերպված, հասկանալի բոլորի համար։ Հրահանգից հետո կարևոր է կատարել ընկալման ստուգում՝

- Ի՞նչ ենք անելու։
- Ինչպե՞ս ենք աշխատելու։
- Ի՞նչ ենք անելու <<Ավարտ>> հրահանգից հետո։

- Ինչքա՞ն ժամանակ ունենք աշխատանքը կատարելու համար։

Ինքնուրույն աշխատանքի իրականացման ձև կարող է լինել խաչբառը, խնդիրների լուծումը, թեստը, զեկույցը, շարադրությունը։

Երբեմն, կախված դասի տեսակից և ծավալից, ինքնուրույն աշխատանքը նպատակահարմար է հանձնարարել տանը։

5. Դասի ավարտ

Դասի ավարտից հետո ուսուցիչն իր համար անպայման պետք է նդրադարձ կատարի դասի ընթացքին և վերլուծի՝ ի՞նչը լավ ստացվեց, ինչո՞ւ, ի՞նչը կիսատ մնաց, ինչո՞ւ։ Դասի ավարտական փուլում անհրաժեշտ է աշակերտների կողմից անդրադարձ կատարել դասի վերջնարդյունքներին, տեսնել դրանց իրագործումը։ Աշակերտներն այդ վերջնարդյունքները պետք է կարողանան կապել մեծ նպատակի հետ։ Այնուհետև կարևոր է տնային հանձնարարության տեսանելի ներկայացումը օրինակ պաստառի, գրատախտակի կամ էկրանի վրա գրելով։

Դասի ավարտին կիրառվող մեթոդներից են. Արագ պտույտը, Ելքի քարտերը, Կպչուն հարցը, Ամփոփում նախադասությամբ, Զույգերով ամփոփում, Համեմատություն-փոխաբերություն, ԳՈՒՍ, Երկու բան և այլ մեթոդներ։

Դասի ավարտին պետք է հատկացնել ամենաքիչ ժամանակը՝ 2-5 րոպե։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով բոլոր մեթոդներն ու այդ մեթոդների մոդել կազմող ուղիղ հրահանգումով դասավանդումը եզրակացրեցի, որ

● Սովորողների առաջադիմությունն ու կրթության եւ գիտելիքի նկատմամաբ հետաքրքրությունը խթանելու համար անհրաժեշտ է մշտապես յուրաքանչյուր դաս ներկայացնել նորովի՝ նոր մեթոդներով, տեխնոլոգիաներով

● Սովորողներն ավելի ինքնուրույն մտածող են դառնում, երբ ուսուցչի կողմից նոր նյութի հաղորդումն ու ներկայացումը ավելի սեղմ է, դրա փոխարեն գործնական աշխատանքներն ավելի ընդլայնված՝ խթանելու համար սովորողի ինքնուրույն եւ թիմային աշխատանքները:

● Ավանդական մեթոդները միտված են տալու միայն գիտելիք եւ ավելի քիչ չափաբաժնով կարողունակություն, իսկ արդի մեթոդները պատրաստում են կարողունակություններով օժտված, վերլուծող, տրամաբանող, ստեղծագործող աշակերտներ:

Ստորև ներկայացնում եմ ՈՒՀԴ դասապլանի իմ օրինակը, որը համապատասխանում է վերը նշված բոլոր չափանիշներին և կետերին (տե՛ս Հավելված 1):

ՈՒՀԴ ԴԱՍԱՊԼԱՆԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Հավելված 1

Ձևանմուշը ստեղծվել է Դասավանդի՛ր, Հայաստան կազմակերպության հետ աշխատանքի ընթացքում և առանց հեղինակի թույլտվության արտատպելն ու օգտագործելը խստիվ արգելվում է:

ՈՒՀԴ դասապլան
Աննա Անդրեասյան

Կաղապարի լրացման տեսաուղեցույց
Մեթոդական ուղեցույց

ՊՈԱԿ դպրոց	Ամսաթիվ	Առարկա
Արևաածագի միջն. դպրոց	15.09.2023	Աշխարհագրություն
Ուսուցիչ	**Դասարան (աշակերտներ)**	**Թեմա (էջ)**
Աննա Անդրեասյան	8-րդ դաս., 10 աշակերտ	«Արլ. Եվրոպա. կազմը, աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները» էջ 11-13
Կարևոր հղումներ և կիսամյակային արդյունքներ (Տեղադրել հղումները)	• Դասագուգակ • Դասագիրք • Թեմատիկ պլան	• Ակադեմիական հայտորոշիչ թեստի վերլուծություն • Առաջնորդական կարողունակությունների վերլուծություն

Դասի վերջնարդյունքներ
Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին: Օգտվել Բլում-Անդերսոնի տաքսոնոմիայից: ՍՄՄՈԹ վերջնարդյունքներ սահմանելու համար:

- Ցույց տալ քարտեզի վրա Արլ. Եվրոպայի տարածքը, կազմում գտնվող երկրները:
- Թվարկել Արլ. Եվրոպայում առկա օգտակար հանածոները:
- Ներկայացնել Արլ. Եվրոպայի կազմի ձևավորման ընթացքը:
- Վերլուծել Արլ. Եվրոպայի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները
- Հիմնավորել, թե ըստ ունեցած ռեսուրսների, Արլ. Եվրոպայի երկրներում տնտեսության որ ճյուղերը կարող են զարգանալ:

Առաջնորդական կարողունակություններ
Հիմնվելով առաջնորդության հայեցակարգի վրա՝ ո՞ր կարողունակություններն եք ուզում զարգացնել ձեր և ձեր աշակերտների համար: Մեկ դասի շրջանակներում ցանկալի է սահմանել 1-2 կարողունակություն՝ իրատեսականությունը պահպանելու նպատակով:

Ուսուցչի կարողունակություններ *Նշեք թե ինչ քայլերով եք զարգացնելու նշված կարողունակությունը դասի ընթացքում:*	**Աշակերտի կարողունակություններ** *Նշեք թե ինչ քայլերով եք զարգացնելու նշված կարողունակությունը դասի ընթացքում:*
• ԱՄՐԱՊՆԴԵԼ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՁԳԱՑՈՒՄԸ. ➔ Դասի ընթացքում ուսուցիչն ուշադրություն է դարձնում, որ բոլորին հնարավորություն տա կարծիքը արտահայտելու: ➔ Դասի առաջադրանքները կազմում է բազմատեսակ՝ հնարավորություն տալով յուրաքանչյուր աշակերտին ինքնարտահայտվել և ներգրավվել:	• ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԵԼ. ➔ Աշակերտները վերլուծում են իրենց հույզերը, մտքերը, արժեքներն ու վարքը՝ միաժամանակ զարգացնելով ինքնակառավարման հմտություններ:

Անհրաժեշտ պարագաներ *ԻՆՉ դիդակտիկ պարագաներ և նյութեր են անհրաժեշտ դասի ամեն փուլի համար:*	Բանալի հասկացությունները *ԻՆՉ կարևոր հասկացություններ, անվանումներ և սահմանումներ են սովորելու աշակերտները:*	Գնահատում *Ինչպե՞ս եք չափելու աշակերտների առաջընթացն ու դասի վերջնարդյունքները:*
• Եվրոպայի ֆիզ. և քաղ. քարտեզներ • գունավոր թղթեր	• /չգիտեմ, բոլոր պետությունների անունները գրե՞մ, որոնք որ նոր են սովորելու: Թվով 10-ն են/ • Արևելյան Եվրոպա • ՏԱԴ և ՔԱԴ • Օգտակար հանածոներ • Դոնեցկի ածխային ավազան • Վոլգա, Դանուբ, Դնեպր, Վիսլա գետեր	• Գործնական աշխատանք • Ինքնուրույն աշխատանք • Հարցադրումներ

Դասի սկիզբ (6 րոպե) *Այս հատվածում պետք է բացատրել «ինչո՞ւ» կարևոր դրույթը և կապել այն մեծ նպատակի հետ: Գրել ինչպես, ինչ մեթոդով, եղանակով է իրականացվելու դասի սկիզբը, ինչ հրահանգներ և հարցեր են տրվելու: Նշել ուսուցչի և աշակերտների գործողությունները:*	
Պլանավորման ուղղորդումներ ❖ Անհրաժեշտ է ներկայացնել ☐ *վարքային և այլ սպասելիքները* ☐ *դասի թեման և վերջնարդյունքները* ☐ *դասի կարևոր դրույթներն ու բառապաշարը* ☐ *կապը նախորդ գիտելիքի հետ* ☐ *խթանիչ վարժություն (եթե կա)*	Ջերմացում - Պատկերացրեք՝ Եվրոպա մեկնելու տոմս եք նվեր ստացել: Ո՞ր երկիրը կցանկանայիք մեկնել և ու՞մ հետ: Ինչու՞: Յուրաքանչյուր երկիր հետաքրքիր է յուրովի, իսկ ճամփորդելու համար պետք է ունենալ լավ ընկեր: Անդրադարձ վերջնարդյունքներին:

Նոր նյութի ներկայացում (15 րոպե) *Անհրաժեշտ է ներկայացնել դասի «ինչ»-ն ու «ինչպես»-ը: Բացատրել նոր նյութը, տրամադրել հրահանգներ, բերել օրինակներ և կատարել ընկալման ստուգում:*	
❖ Պլանավորման ուղղորդումներ Անհրաժեշտ է՝ ☐ *բացատրել դասի կարևոր դրույթներն ու սահմանումները* ☐ *նոր նյութի միջոցով խթանել բարձր կարգի մտածողություն* ☐ *ընկալման ստուգման հարցերն ուղղել գիտելիք հասկացման ստուգմանն ու վերլուծական մտածողությանը*	Նախապես զգուշացնել, որ նյութի բացատրությունից հետո կատարելու են գործնական աշխատանք, որտեղ պետք է աղյուսակ լրացնեն: Անհրաժեշտ է ուշադիր լինել, որպեսզի կարողանաք մտապահել: Հարցեր՝ 1. Ինչպես է Եվրոպան բաժանվում Ասիայից 2. Ինչու՞ է անհրաժեշտ կատարել տարածաշրջանային բաժանում Նյութի բացատրությունն ուղեկցել քարտեզի վրա ցուցադրության, պետություն-մայրաքաղաքների ցուցակագրման և հարց ու պատասխանի միջոցով:
❖ Ընկալման ստուգում *Գրել ընկալման ստուգման հարցերը, որոնք պլանավորում եք ներկայացնել գործնական աշխատանքից առաջ, նոր նյութի ընկալումը ստուգելու և քննական մտածողությունը խթանելու համար:*	1. *Քանի՞ պետություն կա Արլ. Եվրոպայի կազմում:* 2. *Ի՞նչ բնական ռեսուրսներով է հարուստ Արլ. Եվրոպան:* 3. *Աշխարհագրական դիրքի ի՞նչ առանձնահատկություններ ունի Արլ. Եվրոպա տարածաշրջանը:*

Գործնական աշխատանք (10 րոպե) *Անհրաժեշտ է նոր գիտելիքն ու հմտությունը կիրառելու հնարավորություն ստեղծել՝ կապելով այն դասի վերջնադյունքների և նոր նյութի հետ: Գրել՝ ինչպես, ինչ մեթոդով/ եղանակով է իրականացվելու գործնական աշխատանքը, ինչ հրահանգ/հրահանգներ են տրվելու: Նշել ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, վարքային ակնկալիքները:*	
❖ Պլանավորման ուղղորդումներ Անհրաժեշտ է՝ ☐ *ապահովել համագործակցություն* ☐ *դիտարկել աշխատանքը* ☐ *տրամադրել անհրաժեշտ աջակցություն* ☐ *համոզվել, որ ներկայացված նոր նյութն օգնեց աշակերտներին առաջադրանքը կատարելիս*	**Մեթոդ՝ «PNI»** Բաժանվել թիմերի 1-3 հաշվարկով, տետրերում գծել եռաբաժան աղյուսակ, որտեղ ըստ բաժինների անհրաժեշտ է լրացնել Արևելյան Եվրոպայի վերաբերյալ դրական (Positive), բացասական (Negative) և հետաքրքիր (Interesting) տվյալները: Թիմի ներսում կարելի է կատարել աշխատանքի բաժանում, պետք է աշխատել անաղմուկ, վերջացնելուն պես բարձրացնել գրիչները: Աշխատանքի կատարման համար տրվում է 6 րոպե, ներկայացնելու համար՝ 2-ական:
☐ *համոզվել որ աշակերտները մասնակցում են, միմյանց լսում ու աջակցում են* ☐ *հավաստիանալ, որ կատարվող աշխատանքը կազմակերպված է*	*Հրահանգի ընկալման հարցեր՝* *Ինչ ենք անելու:* *Ինչպես ենք անելու:* *Որքան ժամանակ ունենք:*
Ինքնուրույն աշխատանք (5 րոպե) *Գրել թե ինչ ինքնուրույն աշխատանք է պատրաստված աշակերտների համար: Ինքնուրույն աշխատանքը պետք է արտացոլի դասի վերջնարդյունքները և կապված լինի դասի նախորդ փուլերի հետ: Նշել առաջադրանքի հրահանգը, ուսուցչի և աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները:*	
❖ Պլանավորման ուղղորդումներ Անհրաժեշտ է ☐ *ապահովել առաջադրանք, որը խթանում է աշակերտների քննական մտածողությունը* ☐ *հնարավորություն տալ աշակերտներին ինքուրույն աշխատելու*	**Ազատ շարադրանքի մեթոդ** Արդեն ունենալով որոշակի ինֆորմացիա Արլ. Եվրոպա տարածաշրջանի մասին, մտածել, թե ըստ ունեցած ռեսուրսների Արլ. Եվրոպայի երկրներում տնտեսության որ ճյուղերը կարող են զարգանալ: Մտքերը շարադրել առնվազն 3 նախադասությամբ:
Դասի ավարտ (5 րոպե) *Ամփոփել դասի վերջնարդյունքները և կարևոր դրույթները: Աշակերտների հետ քննարկել սովորածի կարևորությունն ու հետագա կիրառությունը: Բացատրել տնային հանձնարարությունը և հաջորդիվ քայլերը:*	
❖ Պլանավորման ուղղորդումներ Անհրաժեշտ է՝ ☐ *անդրադարձ կատարել աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք)* ☐ *հետադարձ կապ տրամադրել դասին*	Ուսուցիչն աշակերտների միջոցով անդրադարձ է կատարում դասի վերջնարդյունքներին: **(Մեթոդ՝ «Անավարտ նախադասություններ»)** Աշակերտները թերթիկների վրա գրում են՝ • *Ես այսօր սովորեցի .....* • *Ինձ դուր եկավ.....* • *Այս թեման կարևոր է, որովհետև .....* • *Կուզեի հաջորդ դասին .....*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Խաչատրյան, Ս. (2020), Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան,
- Խաչատրյան Մ., Դավթյան Մ. (2019), Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Երևան
- Anderson, L. W., & Krathwohl, D. R. (2001). A taxonomy for learning, teaching, and assessing, Abridged Edition. Boston, MA: Allyn and Bacon.
- National Institute for Direct Instruction (NIFDI)
- Clark, R. (2020). How to Create a Presentation. Yerevan, Armenia: Teach For Armenia
- Hattie, J. (2009). Visible Learning. Abingdon, UK: Routledge.
- Yendol-Hoppey, D. and Dana, N.F. (2010). Powerful Professional Development. California: Corwin.
- Zhou, H. (2017). Why Does Writing Good Learning Objectives Matter. Retrieved on 27 April 2020
- Выготский Л. С., (1926), Педагогическая психология, Москва
- Гребенюкова В. И., (2014), Активные и интерактивные методы обучения, учебное пособие Нижневартвоск